**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

## 1907 ԹՎԱԿԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 1907 թվականի հոկտեմբերի 18-ին:

Մշտական արբիտրաժային դատարանը հիմնադրվել է 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիաների հիման վրա՝ որոնք ապահովում են Դատարանի գոյության և գործունեության իրավական հիմքը: Դատարանի անդամ երկրներ չեն հանդիսանում աֆրիկյան պետությունների մեծ մասը, Կենտրոնական Ասիայի երկրները (բացառությամբ Ղրղզստանի), Եմենը, Մյանմարը, Հյուսիսային Կորեան, Աֆղանստանը, Ադրբեջանը և այլն:

Դատարանի մատուցած ծառայությունները չեն սահմանափակվում վեճերի արբիտրաժային կարգավորմամբ, այլև կարող են ներառել փաստահավաք առաքելություններ, անդամ երկրներին ցուցաբերվող վարչական աջակցություն, վեճերի դեպքում միջնորդություն, փաստաթղթաշրջանառության և արխիվացման ծառայություններ և այլն: Այն նաև տրամադրում է իր տարածքը և ծառայություններն այլ արբիտրաժային կառույցների շրջանակներում վեճերի կարգավորման գործընթացների իրականացման համար:

Դատարանին Հայաստանի Հանրապետության անդամակցումը կարևորվում է միջազգային հեղինակության բարձրացման տեսանկյունից: Անդամակցումը կարևորվում է նաև Հայաստանի՝ տնտեսական զարգացման և ներդրումային գրավչության բարձրացման համատեքստում՝ հնարավոր ներդրողներին տալով լրացուցիչ իրավական երաշխիքներ:

Մշտական արբիտրաժային դատարանը զբաղվում է նաև բնապահպանական վեճերի կարգավորմամբ, ինչպես նաև ցուցաբերում է վարչական աջակցություն Էներգետիկ խարտիայի շրջանակներում, կամ UNCITRAL-ի արբիտրաժային կանոնների ներքո իրականացվող վեճերի կարգավորման գործընթացներին: Այս համատեքստում էլ ավելի է կարևորվում Դատարանին ՀՀ անդամակցումը՝ հաշվի առնելով Էներգետիկ խարտիայի շրջանակներում Հայաստանի նախաձեռնված գործընթացը, ինչպես նաև Հայաստանի դեմ բնապահպանական, տնտեսական և այլ բնույթի վեճերի նախաձեռնման բարձր հավանականությունը:

Մշտական արբիտրաժային դատարանին անդամ է 124 պետություն, որոնք միացել են Մշտական արբիտրաժային դատարանի հիմնադիր կոնվենցիաներից (1899 և 1907 թվականներին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիաներ) մեկին կամ երկուսին:

Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիային անդամ է 104 պետություն (ցանկը կից ներկայացվում է):

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1910 թվականի հունվարի 26-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1907 թվականի հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

17.10.2024

X 

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN PARUYR 1512730076

**ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՑԱՆԿ**
**1907 թվականի հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի մասնակից պետությունների վերաբերյալ**

| Պետություն | Միացել է |
|---|---|
| 1. Ալբանիա | 27.12.2011 |
| 2. Ավստրալիա | 21.02.1997 |
| 3. Ավստրիա | 12.11.1918 |
| 4. Բահամներ | 13.06.2016 |
| 5. Բահրեյն | 29.08.2008 |
| 6. Բանգլադեշ | 26.02.2012 |
| 7. Բելառուս | 04.06.1962 |
| 8. Բելգիա | 07.10.1910 |
| 9. Բելիզ | 21.01.2003 |
| 10. Բենին | 16.09.2005 |
| 11. Բոլիվիա | 26.01.1910 |
| 12. Բրազիլիա | 06.03.1914 |
| 13. Բուլղարիա | 10.06.2000 |
| 14. Բուրկինա Ֆասո | 30.08.1961 |
| 15. Կամբոջա | 07.01.1956 |
| 16. Կամերուն | 01.08.1961 |
| 17. Կանադա | 09.07.1994 |
| 18. Չիլի | 18.01.1998 |
| 19. Չինաստան | 26.01.1910 |
| 20. Կոլումբիա | 17.03.1997 |

| | |
|---|---|
| 21. Կոնգո | 25.03.1961 |
| 22. Կոստա Ռիկա | 20.07.1999 |
| 23. Կուբա | 22.04.1912 |
| 24. Կիպրոս | 12.11.1993 |
| 25. Չեխիա | 11.10.1993 |
| 26. Դանիա | 26.01.1910 |
| 27. Ջիբութի | 17.04.2016 |
| 28. Դոմինիկյան Հանրապետություն | 07.09.1958 |
| 29. Եգիպտոս | 04.11.1968 |
| 30. Էլ Սալվադոր | 26.01.1910 |
| 31. Էրիտրեա | 04.10.1997 |
| 32. Էստոնիա | 01.09.2003 |
| 33. Էսվատինի | 25.12.1970 |
| 34. Ֆինլանդիա | 09.06.1922 |
| 35. Ֆրանսիա | 06.12.1910 |
| 36. Վրաստան | 22.03.2015 |
| 37. Գերմանիա | 26.01.1910 |
| 38. Գվատեմալա | 14.05.1911 |
| 39. Գայանա | 25.01.1998 |
| 40. Հաիթի | 03.04.1910 |
| 41. Հոնդուրաս | 30.01.1962 |
| 42. Հունգարիա | 16.11.1918 |
| 43. Իսլանդիա | 08.12.1955 |
| 44. Իրաք | 30.10.1970 |
| 45. Իռլանդիա | 06.07.2002 |
| 46. Իսրայել | 17.06.21962 |
| 47. Ճապոնիա | 11.02.1912 |
| 48. Հորդանան | 27.01.1992 |
| 49. Քենյա | 11.06.2006 |
| 50. Կորեա | 21.02.2000 |
| 51. Կոսովո | 05.01.2016 |
| 52. Քուվեյթ | 14.09.2003 |
| 53. Ղրղզստան | 04.06.1992 |

| | |
|---|---|
| 54. Լաոսի Ժողովրդաժողովրդավարական Հանրապետություն | 18.07.1955 |
| 55. Լատվիա | 12.08.2001 |
| 56. Լիբանան | 14.04.1968 |
| 57. Լիբիա | 02.09.1996 |
| 58. Լիխտենշտայն | 23.09.1994 |
| 59. Լիտվա | 09.01.2005 |
| 60. Լյուքսեմբուրգ | 04.11.1912 |
| 61. Մադագասկար | 06.12.2009 |
| 62. Մալայզիա | 06.05.2002 |
| 63. Մալթա | 07.09.1968 |
| 64. Մեքսիկա | 26.01.1910 |
| 65. Մոնղոլիա | 14.05.2019 |
| 66. Մարոկկո | 04.06.2001 |
| 67. Նիդերլանդներ | 26.01.1910 |
| 68. Նոր Զելանդիա | 12.06.2010 |
| 69. Նիկարագուա | 14.02.1910 |
| 70. Նիգերիա | 16.02.1987 |
| 71. Հյուսիսային Մակեդոնիա | 17.02.2001 |
| 72. Նորվեգիա | 18.11.1910 |
| 73. Պաղեստին | 19.12.2015 |
| 74. Պանամա | 10.11.1911 |
| 75. Պարագվայ | 24.06.1993 |
| 76. Ֆիլիպիններ | 12.09.2010 |
| 77. Լեհաստան | 26.05.1922 |
| 78. Պորտուգալիա | 12.06.1911 |
| 79. Կատար | 02.12.2005 |
| 80. Ռումինիա | 30.04.1912 |
| 81. Ռուսաստանի Դաշնություն | 26.01.1910 |
| 82. Ռուանդա | 28.06.2011 |
| 83. Սան Տոմե և Փրինսիփի | 04.11.2014 |
| 84. Սաուդյան Արաբիա | 20.01.2002 |
| 85. Սենեգալ | 30.09.1977 |
| 86. Սինգապուր | 11.09.1993 |

| | |
|---|---|
| 87. Սլովակիա | 26.04.1993 |
| 88. Սլովենիա | 29.03.2004 |
| 89. Հարավային Աֆրիկա | 21.12.1998 |
| 90. Իսպանիա | 17.05.1913 |
| 91. Սուդան | 02.12.1966 |
| 92. Սուրինամ | 27.12.1992 |
| 93. Շվեդիա | 16.01.1910 |
| 94. Շվեյցարիա | 11.07.1910 |
| 95. Թայլանդ | 11.05.1910 |
| 96. Տոգո | 17.12.2004 |
| 97. Ուգանդա | 30.04.1966 |
| 98. Ուկրաինա | 04.04.1962 |
| 99. Արաբական Միացյալ Էմիրություններ | 05.01.2009 |
| 100. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | 12.10.1970 |
| 101. Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 26.01.1910 |
| 102. Վանուատու | 11.08.2024 |
| 103. Վիետնամ | 27.02.2012 |
| 104. Զամբիա | 31.12.1999 |